«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

20 հոկտեմբերի, 2023 թ. N 85 - Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ, ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏՄԱՆ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ, ՍԿՍՆԱԿ ԵՎ ԳՈՐԾՈՂ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ ՎՃԱՐԵԼՈՒՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Կանոնադրության 14.16.3 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. 2023 թվականի սեպտեմբերին Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված անձանց համար 2023-26թթ. ընթացքում Պալատի որակավորման քննությունների մասնակցությունը, որակավորման քննություններից ազատումը և բողոքարկումը, Պալատի շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումների, «Հաշվապահական հաշվառում և հարկային օրենսդրություն» թեմայով դասընթացի մասնակցությունը իրականացնել անհատույց:

1.1 2023 թվականի սեպտեմբերին Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված անձանց համար 2026թ. ընթացքում Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի

որակավորման յուրաքանչյուր դասընթացի մասնակցության վճարը սահմանել 27 000 ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից և տարածվում է 2023 թվականի սեպտեմբերին Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված ու սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Պալատին դիմած անձանց հետ ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**